ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն այսօր աշխատանքային այց է կատարել ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն: ՄՓՎ պետ Էդիկ Գալստյանի ուղեկցությամբ մարզպետ Դավիթ Գևորգյանը շրջել է ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի **մարզային փրկարարական** վարչության տարածքում, ծանոթացել տեխնիկական հագեցվածությանն ու շենքային պայմաններին, իրականացվող աշխատանքներին և առաջիկա ծրագրերին:

Քննարկվել են բարձր ջերմաստիճանի պայմաններում հրդեհավտանգ իրավիճակների կանխարգելման, հրդեհաշիջման հետ կապված խնդիրներ:

Մարզպետարանի ոլորտի պատասխանատու ստորաբաժանմանը մարզպետը հանձնարարել է սերտ համագործակցել փրկարարական վարչության և համայնքի ղեկավարների հետ՝ մարզի սպասարկման գոտում գտնվող անսարք հրշեջ հիդրանտները հնարավորինս արագ վերանորոգելու և գործելի դարձնելու համար:

Մարզպետն այցելել է հրդեհաշիջման աշխատանքներին արագ արձագանքելու նպատակով Ամբերդ **բարձր լեռնային օդերևութաբանական** կայանում տեղակայված Արագածոտնի ՄՓՎ հրշեջ-փրկարարական ջոկատի հենակետ, ծանոթացել այնտեղ տիրող իրավիճակին և պատրաստվածությանը:

Բյուրականի անտառներում նախորդ տարիներին արձանագրված հրդեհները հաշվի առնելով՝ հուլիսի 20-ից հենակետում շուրջօրյա հերթապահություն է իրականացնում փրկարար ծառայողներից և Բյուրականի անտառպետության աշխատակիցներից կազմված աշխատանքային խումբը:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հորդորում է արհեստականորեն չստեղծել հրդեհավտանգ իրավիճակներ: Ոչ մի դեպքում խոտածածկ տարածքում չնետել թերի հանգցված ծխախոտի մնացորդներ, չիրականացնել չոր խոտի, աղբի կամ այլ մնացորդների այրում և խստորեն պահպանել հակահրդեհային անվտանգության մյուս կանոնները: